

## ԱՎ. ԻՍԱԿԱԿՅԱՆԻ ԳՐԱՌՈՒՄԵՐԸ «ՈՒՍՏԱ ԿԱՐՈ» ՎԵՊԻ ՄԱՍԻՆ

Ավ. Իսահակյանի «Ուստա Կարո» վեպը ազգային կյանքն իր այլացան դրսէորումներով բացահայտող համապարփակ ստեղծագործություն է՝ իմանված ժողովրդի հոգևոր մշակույթի, աշխարհընկալման, կենսափիլխոփայության ու հոգեբանության վրա: Խոսելով իր վեպի մասին՝ Ավ. Իսահակյանը գրում է. «Պատմական վեպ չէ, այլ հոգեբանական, փիլխոփայական, և շատ տարրեր կան մեջը՝ չպոս, րոնան, լիրիկա, հումոր... ու օվկիանոս է, վեպ չէ»<sup>1</sup>: Եվ այս հսկայածավալ նորթը ամբողջացնելու և գեղարվեստական մեկ գործի մեջ ներհյուսելու համար նա անընդհատ աշխատել է, մշակել վեպը՝ ժամանակի կացությանն ու հանգամանքներն արտացոլող նորանոր դրվագներով ու մանրամասներով:

Ինչպես գիտենք, վեպի առաջին՝ ամբողջական տարբերակն Ավ. Իսահակյանն ավարտել է 1912 թ. և, չնայած դրան, 1922 թ. «Արեգ» հանդեսի խմբագիր Սիմոն Հակոբյանին գրում է. « Ես շատ գրադաշտ եմ. շատ բան ունիմ գրելու, անիջյալ «Ուստա Կարոն» չվերջացրի, որ ուրիշ բաների ծեռք զարկեմ: «Ուստա Կարոն» անհաղթելի դժվարություններ ունի. մեծ է, էպոպեա, համայնապարփակ... 700-800 երես ... Թեեւ ավարտած եմ, բայց անվերջ սրբագրում եմ, գրում, չնջում, ավելցնում, պակսենում ... Այդպես է. Տոլստոյը 8 անգամ է գրել «Յանա և Միր»-<ը>... Բայց նա հոգով հանգիստ է եղել և ապահով. ապարանքի մեջ նստած, նորապսակ ...»<sup>2</sup>:

Մի այլ առիթով հեղինակը գրում է, որ վեպն իր «հիմքում փիլխոփայական է և գերազանցապես ազգային-հայկական»<sup>3</sup>: Այս առումով ակադ. Ս. Սարինյանը իրավացիորեն նկատում է. «Սահմանումը ենթակա չէ տրամաբանական լուծման, թե որտեղ է վերջանում փիլխոփայականը, և ինչից է սկսվում ազգայինը: Գեղարվեստական բնագրում

1 Ավետիք Իսահակյանի նամակները, այսուհետև՝ ԱԻՆ, Գահիք, «Ցուաքեր» հրատարակչություն, 1959, էջ 16:

2 Վիեննայի Սիմֆոնիան միաբանության գրապահոց, «Արեգի» խմբագրության պահոց:

դրանք միասնություն են: “Պարզապես ազգայինն ակնարկում է տեղը, ժամանակը, պատմությունը, իսկ փիլիսոփայականը՝ գաղափարը, աշխարհընկալումը, տիեզերականը, որ ազգայինի մեջ արտացոլում է համամարդկայինը: Փիլիսոփայական են սոցիալական ուսուաշխան, ազատության գաղափարը, որ ուղղություն են տալիս վեպի հերոսների մտավոր ու ֆիզիկական ձգտումներին, կազմավորում նրանց հասարակական իդեալը”<sup>4</sup>:

Ավ. Խսահակյանին շատ է զբաղեցրել վեպի գլխավոր հերոսի կերպարը ըստ հնարավորին համակողմանի և լիարժեք կերպով բացահայտելու խնդիրը: Կենսասեր, արդար, ազնիվ, խոհուն ու իմաստախոս Ուստա Կարոն՝ որպես հեղինակի գաղափարախոս, մտահոգ է ազգի ցավերով, պատրաստ է ամեն գնով թերևացնել ժողովրդի վիճակը և ազատել նրան օտար լծից: Կարոն հայ ժողովորդի ձգտումների, երազանքների, վեհ գաղափարների կրողն է, ուստի և, ըստ հեղինակի վկայության, հենց ինքը, հետևաբար և ողջ ժողովորդն է: Հիշենք վեպի առաջին տարբերակի անվանաթերթի գրառումը. «Ամեն մի հայ փոքր-ինչ Ուստա Կարո է»:

Վեպին վերաբերող բազմաթիվ ու բազմազան գրառումներում Ավ. Խսահակյանը շարունակ անդրադարձել է Կարոյի կերպարին՝ անընդհատ հղվելով ու բյուրեղացնելով նրա բնավորության ու մարդկային էության հատկանշական գծերը և աշխատելով առավել համոզիչ ու ամբողջական ներկայացնել նրան: Ծրագրային այս նշումներից, բնութագրական հատվածներից, երկխոսություններից և այլ տարաբնույթ բազմաթիվ նյութերից կանգ առնենք երկուսի վրա, որ պահվում են երևանի Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարանի՝ Ավ. Խսահակյանի ֆոնդում<sup>5</sup>: Սրանցից մեկը՝ ԳԱԹ, ԱԻՖ, 737-II-ը, առաջին անգամ հրապարակել է գրականագետ Ավ. Խսահակյանը<sup>6</sup>, իսկ երկրորդը<sup>7</sup> մասսամբ անտիպ է: 135 էջ կազմող արխիվային այս միավորը տպագրվել է բավական կրծատումներով՝ թելադրված ժամանա-

3 ԱԻՆ, էջ 114:

4 «Ուստա Կարո», Ավ. Խսահակյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 7, Եր., 2016, այսուհետև՝ ՈւԿ, էջ 19:

5 Այսուհետև՝ ԳԱԹ, ԱԻՖ:

6 «Սովետական գրականություն» ամսագիր, Եր., 1975, թիվ 5, էջ 130-139:

7 ԳԱԹ, ԱԻՖ, 24 լր.:

կի հանգամանքներով<sup>8</sup>, որտեղ, ի թիվս այլ գրառումների, բացակայում են նաև «Ուստա Կարո» վեպին վերաբերող հատվածները:

Վեպի գլխավոր հերոսը՝ Կարոն, պատրանքն ու երազայինը իրականին ու հավաստիին միահյուսող ռոմանտիկ անձնավորություն է, որի հախուսն երևակայությունը միօրինակ ու տաղտուկ ներկայից ձգտում է դեպի «դրսի աշխարհներո», որտեղ ամեն ինչ ներդաշնակ է, երազային ու ցանկալի, հետևաբար և, իր խորին համոզմամբ, լիովին հավաստի: Գրառումներից մեկում Ավ. Իսահակյանը նշում է. «Ուստան (տակավին պատանի) գյուղում հանգստություն չուներ. սիրտը մի տեղ չէր հանգչում: Թափառում էր, դեստում էր ընկնում: Թափառում էր կալերը, արտերը, սարերը, ձորերը՝ միշտ երազներով – հեռունալու, գնալու, աշխարհի մեջ ընկնելու»<sup>9</sup>: Եվ «...նրա հոգում մնաց միշտ քարավանի փափագը, թափառելու տենչը, որ<ի> չիրականացումը հածախ կիզում էր նրա հոգին, տանջում, «ախ» քաշել տախս, հառաչել տախս»<sup>10</sup>: Սակայն «Քարավանի վրա նստած կամ քարավանով ձամփիրդել մնաց իր երազը, - շարունակում է Իսահակյանը, - անիրականացած տենչը, որը նա իրականացրեց միայն պատմելու մեջ, երազների մեջ»<sup>11</sup>: Մի այլ տեղում Իսահակյանը գրում է. «Ուստայի երևակայությունը ձախրում էր հեռավոր, անտեսանելի ձանապարհների վրա՝ քարավանների առաջն ընկած և հետևից հետապնդող»<sup>12</sup>:

Ժողովրդի ծոցից ելած բարեսիրտ, արդարադատ, «գիտնակ» ու «աշխարհատես» Կարոն, որ հարգված ու ընդունված է հասարակության բոլոր խավերի կողմից, միաժամանակ անկոտրում ու անխնա է նրանց նկատմամբ, ովքեր կասկածում են նրա խոսքերի ու գործերի հավաստիությանը: «Կենսագրականի մեջ. վայ թե մեկը քննադատեր նրա շինածը, - նշում է Իսահակյանը, - զայրույթով կրանդեր. պատ լիներ՝ կշշեր, հոր լիներ՝ կլցներ հողով»<sup>13</sup>: «Ալաջ Կարոն և Ղուկասը բարեկամներ էին, - մի այլ առիթով գրում է Իսահակյանը, - ժամացույցը՝ իրար հետ ներդաշնակ, սրտերն էլ, բայց կովեցին, գեշացան»<sup>14</sup>: «Ուստան

8 Ավ. Իսահակյան, «Հիշատակարան», Եր., 1977, էջ 396-420, բնագրի պատրաստումը և ծանոթագրումը՝ Ա. Խնձիկյանի:

9 ԳԱԹ, ԱԻՖ, 24 լր., էջ 78:

10 Նոյն տեղում, էջ 103:

11 Նոյն տեղում, էջ 101:

12 ԳԱԹ, ԱԻՖ, 737-II, էջ 78:

13 Նոյն տեղում, էջ 47:

14 Նոյն տեղում, էջ 64:

զայրույթի մեջ մոռացավ իր ժամացույցի խւկական ծագումը.- շարունակում է Ավ. Իսահակյանը,- որ նվեր լինելուց առաջ նա ուներ իր ձամփորդությունների ընթացքից, երբ քարավանն էր վարում հեռու աշխարհները և իր ժամացույցի ծշմարտախոսությունը այն վայրկյանից էր սկսում, երբ մի օր իր քարավանը այնքան մոտիկ եղավ արևի բխման տեղին, և Ուստան արևի հենց բխման վայրկյանին լարեց ժամացույցը և այն օրվանից ոչ մի ժամացույցի հետ գիտակցարար չկամեցավ ու հարկ չտուավ ներդաշնակել. այսպիսով իր բացարձակ հավատքը ծնել էր արևի ծշտության վրա ունեցած անհերթելի հավատքից»<sup>15</sup>:

Կարոյի ոռմանստիզմն ու հոգու մաքրությունը շեշտելու համար Ավ. Իսահակյանը կատարել է հետևյալ գրառումը. «Կովկասի հոգին ու տեմ: Այ ապրելու երկիր. քեֆ կա, մարդ կա. սեր կա...»

Աստծուն մատաղ կշինենք կնկա մը երես տեսնելու համար: Ես տեղ՝ Եվրոպա, կնիկները ամեն բան ցոյց կտան. թե՛ իրենց համար բան չեն պահե, թե՛ իրենց մարդոց համար... (Ուստան ասում է Թիֆլիսի վերաբերմամբ)»<sup>16</sup>:

Անձնական հարցերում, սակայն, Ուստան նաև իրատես է և փոքրինչ հողեղեն: «Ուեալիստորեն լինելու համար,- նկատում է Ավ. Իսահակյանը,- ակնարկել, որ Ուստան օգտվում էր մի-երկու սանամայրներից. սիրո հարաբերություններ. ուրեմն սանահորների հետ երկերեսանի վարմունք, կեղծավորություններ. փող էր տալիս պարտք և չէր ուզում... Կաշառում էր, կուրացնում էր...»<sup>17</sup>:

Վեպի մշակման վրա աշխատելիս Ավ. Իսահակյանը ծրագրել է գրել նաև Կարոյի հայրենի գյուղի մասին նրա հակասական զգացումների մասին: Այս կապակցությամբ նա գրի է առել մի ծավալուն հատված, որ, սակայն, չի ներմուծվել վեպի հյուսվածքի մեջ: Այսպես. «Սուռացել էր հայրենիքը, բայց երբեմն-երբեմն կարոտ էր զարթնում մեջը: Գյումրի գնալիս նպատակ զարթնեց մեջը գյուղ գնալ, իրեն ցոյց տալ, բայց իշեց քեռուն և մյուսներին, մտքից հրաժարվեց...

Ընթերցողի գլխում հարց կծագի, թե ինչո՞ւ Ուստան հետագայում ծննդյան գյուղը (Սալուտ) չգնաց՝ պահանջով ետ առնելու իր հոր կայքը:

Բայց ի՞նչ էր մնացել որ... եզներն ու կովերը յուրացրել էր քեռին. հիմա պիտի ասեր, թե սաստկեցին:

15 Նոյն տեղում, էջ 50:

16 Նոյն տեղում, էջ 68:

17 ԳԱԹ, Ահֆ, 24 լր., էջ 124-125:

Հորերի ցորենը, թե՝ քիչ էր, չկար, կամ ոչիլը կերել էր:

Արտերը՝ գյուղացիք խել էին:

Եթե երթար, մի շնչի հող պիտի տային: Իսկ տունը... ո՞վ գիտե, իիմա ինչ ավեր դրության մեջ է: Գուցե քեռին քանդել է, քար ու փայտը ծախել... Ոչ, չարժե երթալ, տեսնել... Չի էլ ուզում իմանալ, չի էլ ուզուանունները տալ»<sup>18</sup>:

Այս գրառումներում Ավ. Խսահակյանը կատարել է նաև մի շարք ծրագրային նշումներ, որոնցով առաջնորդվել է նա իր վեաը գրեիս: Այսպես. «Աշխատել կրկնություններ չունենալ, ուրիշ տեղ գրածներից չօգտվել: Նոր սիմբոլներ, նոր պատկերներ»<sup>19</sup>: Կամ՝ «Վեպի մեջ ցայտուն դուրս բերել ամբոխային հոգեբանությունը. այն իմաստով, թե ինչպես երեկվա ամբոխը, որ ծափահարում էր Ռւստային, հիացած էր նրանով և պաշտում էր, այսօր մի մարդու պես նրա դեմն է ել և պահանջում է նրան քշել դուրս: Նրանք, որոնք նոյսինիկ Ղուկաս աղայի թշնամիններն էին, այսօր բարեկամացած էին Ղուկասի հետ և նրա կամակատարն էին դարձել: Ռւստային մնացել էին հազիվ մի քանի տասնյակ բարեկամներ, նրանք էլ ծակն էին մտել: Միայն երբ Ռւստան հեռացավ իր կամքով, սկսեցին ուշքի գալ և զղալ ու արդարացնել Ռւստային և մեղադրել Ղուկասին»<sup>20</sup>: «Գրել վաշխառության, կաշառակերության շահագործումների, գյուղական մշակների, հոտաղների, հնձվորների շահագործված վիճակի մասին,- շարունակում է միտքը Խսահակյանը:- Հարկահավաքների մասին: Խստորեն հարկ էր հավաքվում: Ղուկաս աղայի խանութի մասին. խարել կշեռքի, արշինի, որակի կեղծության մասին»<sup>21</sup>:

Կարոն հայրենասեր, արժանապատիվ, ազգային մտածողության և հոգեկերտվածքի տեր և աշխարհը փիլիսոփայորեն ընկալող անձնավորություն է: Ինչպես իրավացիորեն նշում է գրականագետ Ավ. Խսահակյանը, նա վեպի «Չարժիչ ուժն» է, «Ամեն ինչ նրա շուրջն է ծավալվում և նրանով է պայմանավորված»<sup>22</sup>:

**Բանափի բառեր.** - գրություն, մշակում, աշխարհայացք, իդեալ, ոռմանտիկ, ազգային մտածողություն:

18 ԳԱԹ, ԱԻՖ, 737-II, էջ 67-68:

19 ԳԱԹ, ԱԻՖ, 24 լր., էջ 117:

20 Նոյն տեղում, էջ 123:

21 Նոյն տեղում, էջ 127:

22 ՌԿ, 626:

**Анагит Варташян**  
**Записи Ав.Исаакяна о романе "Уста Каро"**

**Резюме**

Как известно, Ав.Исаакян завершил первый законченный вариант своего романа "Уста Каро" в 1912 г., но в связи с изменением историко-политических событий того времени автор принял за создание нового варианта романа, редактирование и доработка которого продолжались практически до конца его жизни. В статье на основе изучения некоторых ключевых заметок и записей, хранящихся в архиве Ав.Исаакяна и в основном неопубликованных, была в частности, выделена задача максимально разностороннего и полноценного выявления образа главного героя романа - Каро.

**Ключевые слова:** запись, обработка, мировоззрение, идеал, патриот, романтик, национальное мышление.

**Anahit Vartanyan**  
**Av. Isahakyan's recordsabout the novel “UstaKaro”**

**Summary**

It is known that Av. Isahakyan completed the first finished version of his novel "Usta Karo" in 1912, but due to a change in the historical and political events of the time, the author began creating a new version of the novel, the process of editing and revision of which continued until the end of his life. Based on the study of some mostly unpublished key notes and records stored in the archive of Av. Isahakyan, the task of maximally diversified and full identification of the image of the main character of the novel, Caro, was highlighted in the article.

**Keywords:** recording, processing, worldview, ideal, patriot, romantic, national thinking.